«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն

Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
E-mail:armenmirzoiian@gmail.com, info@hetq.am, URL : www.hetq.am

17.09.2021թ

ՀՀ պաշտպանության նախարար
Արշակ Կարապետյանին

Հարգելի՛ պարոն Կարապետյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2021 թվականի սեպտեմբերի 16-ին որոշ լրատվամիջոցներ գրել էին, որ Մոսկվայում ՊՆ-ն գաղտնի բանակցություններ է վարում ադրբեջանական կողմի հետ: Արդյո՞ք այս տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը:
2. «Արևմուտք-2021» զորավարժությունների նպատակով Մոսկվայում եղած ժամանակ, արդյոք Դուք հանդիպե՞լ եք Ադրբեջանի պաշտոնական որևէ ներկայացուցչի հետ:
3. Եթե այո՛, ապա ի՞նչ հարցեր են քննարկվել:
4. Արդյո՞ք ադրբեջանակն կողմի հետ քննարկվում է հայ-ադրբեջանական շփման գծի սահմանազատման և սահմանագծման հարցերը:
5. «Արևմուտք-2021» զորավարժությունների ընթացքում ռուսական կողմի հետշ հանդիպումների ժամանակ, քննարկվե՞լ է արդյոք ռուսական խաղաղապահ ուժերի մանդատի երկարաձգման հարցը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ

«Հետք» թերթի լրագրող Արմեն Միրզոյան